2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլանների, նախատեսված է եղել **47 պրակտիկա** (*տասներկու ուսումնական* - 9՝ առկա ուսուցում, 3՝ հեռակա ուսուցում, *տասներկու արտադրական (մանկավարժական)* - 8՝ առկա ուսուցում, 4՝ հեռակա ուսուցում, *քսանմեկ մասնագիտական* - 13՝ առկա ուսուցում, 8՝ հեռակա ուսուցում, *երկու գիտամանկավարժական* – հեռակա ուսուցում)։



Ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է 14 հուշագիր և 32 պայմանագիր, որոնցից *7 պայմանագիր (*Իջևանի Սպ.Սարգսյանի անվան N1 հիմնական դպրոց, Իջևանի N4 հիմնական դպրոց, Իջևանի Մ.Մարտիրոսյանի անվան N5 հիմնական դպրոց, Իջևանի համայնքապետարան, «Քարարտ» ՓԲԸ, «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ, Գավառի պետական համալսարան), *2 համագործակցության հուշագիր* (LT CODING, Դիլիջանի կենտրոնական դպրոց) ստորագրվել է 2022-2023 ուսումնական տարվա ընթացում:

Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի և մասնագիտական ամբիոնների կողմից նախապես պրակտիկայի բաժին ներկայացված ծրագրերի:



Ուսումնական պրակտիկան, որպես ուսումնական գործընթացի մաս, կազմակերպվել է չորս կրթական ծրագրով («Պատմություն», «Զբոսաշրջություն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Դիզայն»), մասնակցել է 138 ուսանող: Կրթական կարիքներից ելնելով, ըստ պրակտիկայի ծրագրային բովանդակության, ղեկավարների կողմից հանձնարարված առաջադրանքների շրջանակներում ուսանողները անհատական թե խմբային եղանակով կատարել են տեղեկատվության հավաքագրման, համակարգման, վերլուծման աշխատանքներ, զարգացրել ճանաչողությունը մասնագիտության ոլորտում: Ուսումնական պրակտիկաներն իրականացվել են կրթական միջավայրում և

համալսարանից դուրս՝ ճանաչողական էքսկուրսիաների միջոցով ընդգրկելով տարբեր բնաշխարագրական տարածքներ և օբյեկտներ, որպես գործոն ուսանողների մոտ զարգացնելու ուսումնասիրվող նյութի նկատմամբ հետաքրքրությունն ու ճանաչողությունը, տեսնելու նոր գիտելիքի կապը կյանքի հետ և մասնագիտության հետ, զարգացնելու հետազոտական գործունեության և ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը:

«Պատմություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսում և հեռակա ուսուցման 3-րդ կուրսում ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողներն ուսումնասիրել են ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, ծանոթացել են դրանց առանձնահատկություններին, ճանաչողական էքսկուրսիա կատարել Լոռու մարզ:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին և հեռակա ուսուցման 2-րդ կուրսերում «ուսումնական պրակտիկա-1»-ի շրջանակներում ուսումնասիրվել են թանգարանների, բնական և պատմամշակութային հուշարձանների, ենթակառուցվածքների դերը զբոսաշրջության մեջ, կատարվել այցելություններ ՀՀ Տավուշի մարզի, Արմավիրի մարզի և Երևան քաղաքի զբոսաշրջային տարբեր դեստինացիաներ (մարզային և մայրաքաղաքային պատմա-մշակութային օբյեկտներ՝ եկեղեցիներ, թանգարաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ, տարածական օբյեկտներ):

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ և հեռակա ուսուցման 3-րդ կուրսերում «ուսումնական պրակտիկա-2»-ի շրջանակներում ուսանողներին ուսումնասիրել և կատարվել են այցելություններ ՀՀ Տավուշի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր, զբոսաշրջային տարբեր դեստինացիաներ (մարզային և մայրաքաղաքային պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցիներ, թանգարաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ, տարածական օբյեկտներ): Ուսումնասիրված տեղեկատվության վերլուծությունների հիման վրա կատարել եզրահանգումներ ռեսուրսների օգտագործման առկա վիճակի և հեռանկարային գործընթացների վերաբերյալ, որպես զբոսավար ներկայացրել օբյեկտները, կատարել երթուղու զբոսաշրջային գրավչության գնահատում:

«Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսումնասիրել են ճարտարապետական կառույցների, ավանդական հագուստի և գրքի ձևավորման առանձնահատկությունները, ծանոթացել խնդիրների լուծման տեխնիկապես նորովի մոտեցումների, զարգացրել նոր գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները կատարել են ապակենկարչության, ոչ հենքային և հանգուցավոր գործվածքների ուսումնասիրում, առաջադրանքների տեխնիկական հնարավորությունների հիման վրա կատարել ստեղծագործական աշխատանքներ:

Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել են այցելություններ «Թելիկ» և «Չիբուխչյան» արվեստիկենտրոններ և «Իջևանի պատմաերկրագիտական թանգարան»:

Ուսումնական պրակտիկաներն ավարտվել են ստուգարքով, որոնց ամփոփման արդյունքում ակադեմիական պարտք է կուտակել հեռակա ուսուցման *6 ուսանող:*

Ուսումնական պրակտիկաների վերաբերյալ պրակտիկայի բաժնի կողմից առաջարկվում է՝

- մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվող ծրագրերում առաջնային համարել

կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների ապահովումը,

- պրակտիկայի ծրագրում ունենալ նախնական ֆինանսական հաշվարկ,
- ղեկավարների ընտրություն հարցում հաշվի առնել ուսանողական հարցումների արդյունքները;

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաներն իրականացվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով, իսկ **գիտամանկավարժական պրակտիկան** «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով սովորող ուսանողների համար: Ըստ կուրսերի մասնակցել է ընդհանուր 105 ուսանող: Առկա ուսուցման ուսանողների պրակտիկան կազմակերպվել է խմբային եղանակով՝ մանակավարժական պրակտիկաների համար մասնաճյուղի հետ համագործակցության պայմանագիր ունեցող դպրոցներում (Իջևանի թիվ 1 հիմնական դպրոց, Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց և Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց), իսկ հեռակա ուսուցման ուսանողների համար թե խմբային, թե ցրված եղանակով՝ ըստ բնակության և աշխատանքի վայրերի ընդգրկելով Երևան քաղաքի, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերի տարբեր դպրոցներ (33 դպրոց): Գործընթացը կազմակերպելու համար բաժնի կողմից պատրաստվել է 50 գրություն: Պրակտիկայի իրականացման ընթացքում բոլոր դպրոցներն աջակցել են մասնաճյուղի ուսանողներին, ղեկավար նշանակելու, մանկավարժական կարողություններ ձևավորելու և զարգացնելու գործում:



Պրակտիկայի վայրում ուսանողների կողմից կատարված աշխատանքներն արտահայտվել են թղթապանակներում, որոնք ընթացքում վերահսկվել են ղեկավարների կողմից, հաստատվել ստուգարքին: Արդյունքում մանկավարժական պրակտիկայից բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»:

Պրակտիկայի ավարտին պրակտիկայի բաժնի կողմից մշակված հարցաթերթիկների միջոցով կատարվել է արտաքին շահակիցների հարցում: Հարցմանը մասնակցել են պրակտիկայի շրջանակներում ընդգրկված դասարանների դասվարները և ուսուցիչները:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի 3-րդ կուրսի հարցման արդյունքներով գնահատվել է ուսանողների **95%-ը**:



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեսական գիտելիքները և կարողությունները
2. մանկավարժական տակտը և վարպետությունը,
3. հմտորեն իրականացնում են խմբային աշխատանք,
4. անկաշկանդ արտահայտում են իրենց միտքը։

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետում,

2. տարիքային հոգեբանության տիրապետում,

3. մեթոդների և հնարների առավելագույնս տիրապետում:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի առաջին կիսամյակի հարցման արդյունքներով գնահատվել է ուսանողների **100%-ը**:



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը,
2. նոր մեթոդների և հնարների կիրառում,
3. պարտաճանաչություն նպատասխանատվություն աշխատանքի նկատմամբ,
4. վիկտորինաներ և խմբային աշխատանքներ կազմակերպելու կարողությունը,
5. երեխաների հետ շփվելու կարողությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. անընդհատ կատարելագործել մասնագիտական գիտելիքները,
2. ծանոթանան նոր չափորոշիչներին,
3. դասագրքերի իմացություն,
4. ժամանակակից մանկավարժական մեթոդների նպատակային ուսումնասիրում և կիրառում,
5. ուսանողներին թույլ տալ ուսման գործընթացում ինքնուրույն վարել դասեր:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի երկրորդ կիսամյակի հարցումների ընթացքում գնահատվել է ուսանողների **80%-ը**:



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. մասնագիտական նյութին տիրապետելը, գիտելիքի գերազանց մակարդակը,
2. հրաշալի փոխհարաբերություններ ստեղծելը, երեխաների հետ գերազանց շփումը,
3. դասերի պլանավորումը նոր չափորոշիչներով, թեմատիկ պլանավորմանը տիրապետելը,
4. դասարանում որպես ուսուցիչ իրեն պահելու կարողությունը, համարձակությունը, դասը կառավարելու կարողությունը,
5. դասապրոցեսում նորագույն մեթոդների կիրառությունը,
6. մասնագիտական կատարելագործմանն ուղղված աշխատանքի կազմակերպումը,
7. դասախոսների ջերմ վերաբերմունքը և վերահսկողությունը։

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ինքնակրթությունը, սեփական մտքերը ձևակերպելու կարողությունը,
2. աշակերտների ուշադրության կառավարումը,
3. տեղեկությունը, նյութն ավելի տեսանելի և մատչելի ներկայացնելը,
4. կարողանալ կառավարել ժամանակը
5. հետադարձ կապի ապահովումը։

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի հարցմանը գնահատվել են ուսանողների **100 %-ը** :



Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. կատարել հետևողական աշխատանք,
2. լինել տեղեկացված մանկավարժական նոր մոտեցումներին,
3. զարգացնել բանավոր և գրավոր խոսքը:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի առաջին կիսամյակի հարցման արդյունքներով գնահատվել է ուսանողների **100%-ը**:

ԵՊՀ ԻՄ պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանակվարժական առավելությունների համար դպրոցի ուսուցիչները նշել են.

1. տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը,
2. հետաքրքրվածություն և սեր մասնագիտության նկատմամբ,
3. երեխաների հետ շփվելու կարողությունը,
4. նոր գիտելիքներ ձեռք բերելու ցանկությունը։

Պրակտիկանտների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ինքնակրթությամբ զբաղվել,
2. ստեղծարար գործունեություն ծավալել,
3. կազմակերպեն քննարկումներ և խմբային աշխատանքներ։

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի երկրորդ կիսամյակի հարցման արդյունքներով գնահատվել է ուսանողների 100%-ը։

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը,
2. չկաշկանդվելը,
3. ազատ շփումը աշակերտների հետ։

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ավելի շատ աշխատել,
2. զբաղվել ինքնակրթությամբ։



Մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են 11 կրթական ծրագրի ուսանողների համար՝ խմբային և ոչ խմբային եղանակով: Խմբային եղանակով կազմակերպվել են առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ, «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Դիզայն» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերի 4-րդ, հեռակա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ և «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսերում (ԵՊՀ ԻՄ, Տավուշի Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջ, «Հույսի կամուրջ» ՀԿ, Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն), մյուս կուրսերում պրակտիկաները կազմակերպվել են տարբեր հիմնարկություններում՝ համաձայն պրակտիկայի ղեկավարների կողմից բաժին ներկայացված հաստատությունների ցանկի: Դրանք ընդգրկել են Երևան քաղաքի, Տավուշի և Լոռու մարզերի ընդհանուր 53 հաստատություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն և ՀՀ-ում գործող բանկերի Տավուշի մասնաճյուղեր, հյուրանոցառեստորանային համալիրներ, համայնքապետարաններ, մարզպետարաններ, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և այլն: Պրակտիկային մասնակցել է 262 ուսանող: Գործընթացն իրականացնելու համար բաժնի կողմից պատրաստվել և հաստատություններ է ուղարկվել **78** գրություն:

Պրակտիկաներն իրականացվել են մասնագիտական ամբիոնների կողմից հաստատված ծրագրային պահանջներին համապատասխան, մասնագիտական ամբիոնի կողմից նշանակված ղեկավարներն ուսանողների հետ աշխատանքները կազմակերպել են առկա և առցանց եղանակներով, պրակտիկայի վայրում կատարված աշխատանքները յուրաքանչյուր շաբաթ քննարկվել և հաստատվել են ամբիոնի ղեկավարների կողմից:

Հաշվետվությունները ներկայացվել են բուհի կողմից սահմանված ձևաչափով (պրակտիկայի օրագրեր) և ամբիոնի կողմից առաջադրված պահանջով (բաց հաշվետվություն):

Պրակտիկային մասնակցած բոլոր ուսանողները ստուգարքին մասնակցել և ստացել են «ստուգված»:

Ժամանակացույցի համաձայն ՊԿՇՀ բաժին են ներկայացվել պրակտիկայի ղեկավարների հաշվետվությունները և օրագրերը: Պրակտիկայի կազմակերպման, անցկացման վայրերի վերաբերյալ ուսանողները և ղեկավարներն արտահայտվել են դրական, պրակտիկան համարել արդյունավետ, որպես **դիտողություն և առաջարկություններ նշվել է հետևյալը.**

- «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս - հաստատության հեռու լինելը, քոլեջում առկա համակարգիչների սակավությունն ու անսարքությունը,

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրս – պրակտիկան չիրականացնել դասերին զուգահեռ որպեսզի շաբաթվա տարբեր օրերի հնարավորություն լինի աշխատել տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ,

- «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրս - մեծացնել պրակտիկայի վայրերի ընտրության հնարավորությունները,

- «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս - hy.wikipedia.org էլ. հանրագիտարանում տեղադրված հոդվածներից ստեղծել հոդվածների ժողովածու և տրամադրել ԵՊՀ ԻՄ գրադարանին:

Ընդունող **հաստատությունների ղեկավարների կողմից** բարձր է գնահատվել աշխատանքի վայրում արագ կողմնորոշվելու և գիտելիքները կիրառելու, թիմում աշխատելու, միջանձնային հարաբերություններ ստեղծելու ունակությունները:

Պրակտիկայի կազմակերպման առավելություն են համարել.

- 6 շաբաթ տևողությունը (նախատեսված ժամանակահատվածը հնարավորություն է տալիս գործընթացը կազմակերպել պահանջվող ձևով և որակով),

- ուսանողների մասնակցությամբ ամբիոնի կցված ղեկավարի և հիմնարկության կողմից նշանակված ղեկավարի համատեղ քննարկումները (ղեկավարների ուղղորդմամբ ուսանողների տեսական գիտելիքները վեր են ածվում գործնական հմտությունների):

Կատարված առաջարկներն են.

✓ «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի 5-րդ կուրս - եթե առկա են «Դիլիջան ազգային պարկ»-ի մասին գրվող դիպլոմային աշխատանքներ, տրամադրել կազմակերպությանը,

✓ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս - Գործնական դասերը կազմակերպել մարզի տարբեր հյուրանոցառեստորանային համալիրներում, առաջին կուրսից ուսանողներին

ընդգրկել տարբեր կազմակերպություններում իրականացվող միջոցառումներին:

Պրակտիկայի ավարտին կատարվել է ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների հարցում:

Մասնագիտական պրակտիկաների հարցմանը մասնակցել են պրակտիկա իրականացնող հաստատությունների կողմից նշանակված ղեկավարները:

Առաջին կիսամյակի ընթացքում հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների համար: Պրակտիկան կազմակերպվել է խմբային եղանակով՝ «Հույսի կամուրջ» ՀԿ-ում: Գնահատվել է ուսանողների **100 %-ը**:



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցը նշել է:

1. ստեղծագործ մոտեցում աշխատանքին,
2. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի մեթոդների իմացություն,
3. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հմտություններ և ցանկություն:

Գործընթացը բարելավելու համար առաջարկվել է՝ վերանայել պրակտիկայի ժամանակացույցը և ավելացնել հատկացված ժամանակահատվածը:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի երկրորդ կիսամյակի պրակտիկան կազմակերպվել է տարբեր հաստատություններում: Հարցման ընթացքում գնահատվել է ուսանողների **100%-ը**:



Գործընթացը բարելավելու նպատակով արտաքին շահակիցների կողմից առաջարկվել է՝

1) հանդես գալ հետաքրքիր առաջադրանքներով, խաղերով, հարցադրումներով,
2) ավելի շատ կատարվեն գործնական աշխատանքներ, խաղային պրոցեսներ, թեստային աշխատանքներ,

Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. ճիշտ կողմնորոշում, ակտիվություն, ճարպկություն, նվիրվածություն,
2. պարտաճանաչություն, պատասխանատվություն, շփում երեխաների և աշխատակիցների հետ,
3. սեր կատարած աշխատանքի հանդեպ,
4. երեխայի միտքն ու ցանկությունը հասկանալու կարողություն,
5. զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների հետ աշխատելու ցանկություն:

Երկրորդ կիսամյակի հարցման ընթացքում գնահատվել է *«Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի* ուսանողների **100%-ը**:



Պրակտիկան բարելավելու վերաբերյալ արտաքին շահակիցների կողմից առաջարկ չի կատարվել:

Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1) գրագետ խոսելու կարողություն

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **62%-ը**:



«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **100%-ը**:



Պրակտիկան բարելավելու նպատակով արտաքին շահակիցն առաջարկել է՝

1. կատարել տարբեր բնագավառներին վերաբերող նյութերի թարգմանություններ,
2. ուսման ընթացքում ավելացնել համակարգչային տեխնիկայի գործածությունը՝ հաշվի առնելով արդի աշխատանքային պահանջները:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **100%-ը**:



Պրակտիկան բարելավելու վերաբերյալ արտաքին շահակիցի կողմից առաջարկ չի կատարվել:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. ավելացնել գործնականությունը,
2. դասընթացները կազմակերպել պրակտիկայի վայրում:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **89%-ը**:



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են՝

1. հաղորդակցական հմտություններ,
2. վաճառքի հմտություններ,
3. հաշվապահական հաշվառման գիտելիքներ:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ հարցմանը ի պատասխան նշվել է, պրակտիկայի ղեկավարների հանդիպումների և քննարկումների հաճախակի կազմակերպում:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **74%-ը**:



Պրակտիկան բարելավելու նպատակով արտաքին շահակիցների կողմից առաջարկվել է ավելացնել հաճախումների քանակը և երկարացնել պրակտիկայի ժամկետը:

Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են՝

1. բանկային օրենքներին առավել լավ տիրապետել,
2. իրավական ակտերի խտացված ուսումնասիրություն,
3. բանկային գործին տիրապետելու կարողություն,
4. տվյալների հետ աշխատելու կարողություն և նախնական մշակում:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **100%-ը**:



Պրակտիկան բարելավելու վերաբերյալ արտաքին շահակիցների կողմից առաջարկ չի կատարվել։